

ՀՀ Ազգային ժողովում խմբակցությունների ղեկավարներին
և անկախ պատգամավորներին

Հարգելի տիկնայք և պարոնայք

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր կողմից բարձրացվող հիմնախնդիրը պետական մոտեցում ու լուծում է պահանջում, ուստի դիմելով Ձեզ խնդրում ենք Ազգային ժողովում ևս քննարկման առարկա դարձնել այն:

Հարցի էությունը կայանում է նրանում, որ մեր շահառուներից մեկը՝ քաղաքացի Ա. Մնացականյանը, եղել է «Մխիթար Հերացի» ԲՇԿ-ի (կոոպերատիվի) փայատեր և 1991թ. նշյալ ԲՇԿ-ին վճարել է ընդհանուր 19.000 ԽՄ ռուբլով գումար՝ հետագայում Երևանի Գ-3 թաղամասի 53 նախագծային շենքի կոոպերատիվ բնակարանի բնակելի ֆոնդից բնակարան ստանալու նպատակով: Սակայն նա այդպես էլ այդ բնակարանը չի ստացել և կորցրել է իր գումարը, իսկ այսօր գտնվում է անորոշության մեջ, նույնիսկ ակնկալիք էլ չունի, որ ՀՀ Կառավարությունը երբևէ իրեն և իր նման նույն կարգավիճակում գտնվող անձանց կվճարի այդ գումարները:

Ինչպես Ձեզ հայտնի է անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից ԽՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնությունը տրամադրվում է ՀՀ Կառավարության 02.08.2000թ. հ. 432 որոշմամբ հաստատված կարգով և ՀՀ Կառավարության 12.03.2002թ. հ. 229 որոշմամբ հաստատված ժամանակացույցով: Նշյալ որոշումներով վերահսկողություն իրականացնող մարմին ճանաչված ՀՀ ֆինանսների նախարարությունը¹ այդ որոշմամբ հաստատված ժամանակացույցում նշված ժամկետներին համապատասխան՝ յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի նախագծի հետ միասին ՀՀ Կառավարության քննարկմանը պետք է ներկայացնի փայատերերին տրամադրվող գումարները ՀՀ պետական բյուջեների նախագծերում ներառելու հնարավորությունների մասին հարցը:

Համաձայն ՀՀ Կառավարության 12.03.2002թ. «Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից ԽՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման ժամանակացույցի մասին» հ. 229 որոշմամբ հաստատված ժամանակացույցի պետությունը Երևանի Գ-3 թաղամասի 53 նախագծային շենքից բնակարան ակնկալող «Մխիթար Հերացի» ԲՇԿ փայատերերին պետք է դրամական օգնություն տրամադրեր 2009թ., այդ նպատակով ՀՀ պետական բյուջեում նախատեսված միջոցների հաշվին: Ավաղ, առ այսօր, այդ քաղաքացիները, այդ թվում նաև մեր դիմումատուն, իրենց կողմից ԽՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից իրենց կրած

¹ Ի դեպ, ՀՀ կառավարության հ. 432 և հ. 229 որոշումներում ՀՀ լիազոր մարմինը դեռևս նշված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, սակայն ինչպես բոլորիս հայտնի է ՀՀ Նախագահի 21.04.2008թ. ՆՀ-85-Ն հրամանագրի 1-ին կետի 2-րդ ենթակետով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը վերանվանվել է ՀՀ ֆինանսների նախարարություն և 2008թ. առանձնացել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից:

կորուստների դիմաց սկսած 2009 թվականից առ այսօր չեն կարողանում ստանալ ՀՀ Կառավարության որոշումներով սահմանված իրենց դրամական օգնությունը:

Ի պատասխան 2009թ. ցուցակում ընդգրկված փայտերերի բազմաթիվ դիմումների ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր տարի նրանց հայտնում է, որ պետական բյուջեներով անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոռպերատիվների փայտերերին համապատասխան դրամական օգնություն տրամադրելու համար գումար նախատեսված չէ կամ բավարար չէ վճարումներ իրականացնել (2009թ. ցուցակում ընդգրկված կոռպերատիվների համար):

ՀՀ ֆինանսների նախարարությունը դեռևս 2010թ. ապրիլ ամսվա դրությամբ 2008թ. և 2009թ. ՀՀ պետական բյուջեներով դրամական օգնություն տրամադրելու նպատակով նախատեսված միջոցները չբավարարելու հետևանքով չէր ավարտել ՀՀ Կառավարության 15.11.2005թ. հ. 1999-Ն որոշման (ՀՀ Կառավարության 12.03.2002թ. հ. 229 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին)՝ 2008թ. դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող կոռպերատիվների անդամներին վճարումներ կատարելու գործընթացը:

ՀՀ ֆինանսների նախարարությունն իր գրություններով (23.04.2010թ. հ. 1.1/9.1/2252-20, 23.06.2011թ. հ. 1.1./9.1/80667-11) դիմումատուին հայտնել էր, որ վերոնշյալ փայտերերի վճարումները կատարելուց հետո միայն հնարավոր կլինի անրադառնալ «Մխիթար Հերացի» կոռպերատիվի անդամներին դրամական օգնության գումարներ վճարելու հարցին: Մինևս ժամանակ հայտնել է, որ շրջանառության մեջ է գտնվում ՀՀ Կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում էր փոփոխել ժամանակացույցը: Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգից պարզեցինք, որ նման որոշում ՀՀ Կառավարության կողմից դեռևս չի ընդունվել:

Ավելին, ՀՀ ֆինանսների նախարարության մեկ այլ գրությամբ (15.05.2012թ. հ. 1.1/9.4/6359-1) դիմումատուն տեղեկացվել էր, որ ընթացքում է գտնվում (առ 2012թ. դրությամբ) ժամանակացույցով նախատեսված 2009թ. ընթացքում օգնություն ստանալու իրավունք ունեցող և միջոցները չբավարարելու հետևանքով օգնություն չստացած կոռպերատիվի անդամներին վճարումներ կատարելու գործընթացը, սակայն այդ փայտերերին հասանելիք դրամական օգնությունը տրամադրելուն հնարավոր կլինի անդրադառնալ ժամանակացույցով 2009թ. «Մխիթար Հերացի» կոռպերատիվից առաջ նախատեսված կոռպերատիվների անդամներին վճարումներ կատարելուց հետո: Նույն գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ 2011թ. պետական բյուջեով անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոռպերատիվների փայտերերին համապատասխան դրամական օգնություն տրամադրելու համար գումար նախատեսված չէր, իսկ ՀՀ 2012թ. բյուջեի 06 բաժնի 01 խմբի 01 դասի «01. Անավարտ շինարարության բնակշինարարական կոռպերատիվների փայտերերի ներդրված միջոցների դիմաց պետական օգնություն՝ ծրագրով նախատեսվել է 200.0 միլիոն ՀՀ դրամ: Իսկ մեկ այլ գրությամբ (19.02.2013թ. հ. 1.1/9.2/2001-13) տեղեկացրել է, որ ՀՀ 2013թ. պետական բյուջեով նախատեսվել է 150 միլիոն ՀՀ դրամ գումար:

Փաստորեն այդ նպատակով վճարվող գումարների հատկացման մասով արդեն նկատվում է նվազեցում, ինչը թույլ է տալիս մեզ ենթադրելու, որ եթե ՀՀ Կառավարությունն այս տեմպերով շարժվի, ապա նույնիսկ մինչև 2018թ. ավարտը չի կարող ամբողջությամբ կատարել և ավարտել վճարման գործընթացը, իսկ հ. 229 որոշմամբ սահմանված ժամանակացույցում նշված ժամկետները վաղուց արդեն խախտված են, իսկ վճարման գործընթացն անընդհատ ձգձգվում է ֆինանսական

միջոցներ չունենալու պատճառաբանությամբ: Եթե 2016թ. դրությամբ դեռևս 2009թ. ընթացքում դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց համապատասխան գումարները չեն վճարվել, ապա 2010 և 2011թ. ընդգրկված կոռպերատիվների փայատերերին գումարներ վճարելու հավանականությունն արդեն փոքրանում է:

Կարծում ենք, որ ՀՀ Կառավարությունը պետք է անհապաղ քննարկման առարկա դարձնի անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոռպերատիվների փայատերերի կողմից ԽՍ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց 2009թ. ընթացքում և դրանից հետո դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող քաղաքացիներին գումարների վճարման գործընթացը ձգձգելու հարցը և փորձել լուծումներ գտնել ՀՀ Կառավարության վերը նշված որոշումների պահանջները վերջնականապես կատարելու ուղղությամբ: Բայց քանի որ ՀՀ Կառավարությունն իր նախաձեռնությամբ այն չի իրականացնում, ապա հայցում ենք Ձեր աջակցությունը, որպեսզի ՀՀ Կառավարությունից պահանջեք պարզաբանումներ և նրա հետ միասին գտնել լուծումներ:

Պետք է պարզել, թե ինչու՞ ՀՀ Կառավարության 02.08.2000թ. հ. 432 որոշմամբ հաստատված կարգի պահանջները չի կատարվում ՀՀ Կառավարության 12.03.2002թ. հ. 229 որոշմամբ հաստատված ժամանակացույցում նշված ժամկետներին համապատասխան: Այնպիսի տպավորություն է, որ ՀՀ Կառավարությունը նույնիսկ մոռացել է այդ որոշումների գոյության մասին, այն աստիճան է մոռացության մատնել, որ այդ որոշումներով 2008թ. հետո շարունակում է նշված մնալ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության անվանումը: Իհարկե սա տեխնիկական հարց է, բայց հիմնախնդրի ընդհանուր պատկերի վրա այն ունի էական նշանակություն, դա ցույց է տալիս, որ ՀՀ Կառավարությունը շահագրգռված էլ չէ մեկ օր շուտ վերջնականապես լուծում տալ այս հիմնախնդրին: Ի դեպ, դրա բոլոր բավարար հիմքերն ու հնարավորություններն ունի ՀՀ Կառավարությունը՝ ի դեմս ֆինանսների նախարարության, լուծելու այն, եթե իհարկե քաղաքական կամք դրսևորի:

Խնդրում ենք Ձեզ ՀՀ Կառավարության կողմից ներկայացվող պետության ֆինանսական միջոցների բացակայությունը որպես հիմնավորում չընդունել, քանի որ մենք բոլորս (քաղաքացիական հանրությունը) շատ լավ տեղեկացված ենք, թե ՀՀ Կառավարությունը հաճախ ինչպիսի անարդյունավետ ծախսեր է անում՝ սոցիալական ոլորտի առաջնային հիմնախնդիրների լուծման հաշվին:

Լևոն Ներսիսյան

«Ա. Դ. Մախարովի անվան

մարդու իրավունքների պաշտպանության

հայկական կենտրոն» ՀԿ գործադիր տնօրեն

18.03.2016թ.